

ԱՆՈՒՇ ԱՊՐԵՍՅԱՆ*

*Բանասիրական գիտությունների թեկնածու
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտ (Մատենադարան)*

An-Apresian@mail.ru

DOI: 10.54503/1829-4073-2022.2.198-209

ՀԱՆԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր¹ Գրիգոր Նարեկացի, «Մատենան ողբերգութեան», հանգիստություն, առձայնույթ, բաղաձայնույթ, Մկրտիչ Խերանյան, Վազգեն Գևորգյան:

Ներածություն

Գրիգոր Նարեկացին իր *Մատենան ողբերգութեան*¹ երկն արարել է ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում, ամբողջացրել կյանքի վերջին տարիներին՝ 1001–1003-ին՝ «ի խնդրոյ հայցման հարց միանձանց եւ բազմաց անապատականաց»²: Այն բաղկացած է նախաբան «Դրութիւնք»³-ից, իննսունհինգ գլխից և հիշատակարանից: *Մատենանի* յուրաքանչյուր գլուխ սկսվում է՝ «Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ»⁴ խորագրով, որն «ասես վերնագիր չէ, այլ կենդանի ձայն է, շշուճ, աղերս, հևք, հառաչ, աղաղակ, գոցուն, գոռոց, մոռնչ և նորից շշուճ, նորից աղերս»⁵:

Մատենանի տողերը կառուցված են ներքին ներդաշնակությամբ, որոնք պայմանավորված են ամենատարբեր կրկնություններով՝ **բառային** («Բողոքէր

* Հոդվածը ներկայացվել է 08.10.21, գրախոսվել է 22.12.21, ընդունվել է տպագրության 22.08.22:

¹ Այսուհետև՝ *Մատենան*:

² Գրիգոր Նարեկացի, *Մատենան ողբերգութեան* 1985, 245:

³ *Մատենանի* խորագրի հարցի մասին տե՛ս Թամրազյան 2016, 297–302:

⁴ Այս մասին մանրամասն տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Մատենան ողբերգութեան* 1985, 978–979, ծնթ. 1:

⁵ Սուրենյան 1979, 310:

Հանգիստությունը Գրիգոր Նարեկացու Մատենան ողբերգութեան...

դիմակս դիմակս կերպից կերպից աւաղականաց»⁶), բառային և շարահյուսական («Ոմն եւ ծնունդք իւր,/ Ոմն եւ շառաւիղք իւր», Մատենան, 267), ոճական հնարքների («Ո՛վ մահացուդ ի կենդանեաց,/ Ո՛վ խոհերականդ ի սրբոց», Մատենան, 276), համեմատությունների («Որպէս զգարշեցեալ, որպէս զխոտան գտեալ քո կոչման», Մատենան, 322), հակադրությունների («Որ ինձ սոսկային է, քեզ հեշտայի է,/ Որ ինձ փախչելին է, քեզ վանելի է», Մատենան, 471) և այլն:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների ծայնեղությանը մեծապես նպաստել է նաև **հանգիստությունը**⁷: Հ. Թամրազյանի բնորոշմամբ՝ Նարեկացու բառ-պատկերներում խտացված գունախաղերը, բառաշխարհը, գունաշխարհը՝ պոետիկայի տարրերի, առձայնությանի և բաղաձայնությանի բարձրարվեստ կիրառությամբ նաև մեղեդային հոսքեր են ձևավորում ու տարածում՝ հասցնելով նրա ստեղծագործությունները կատարյալ արտահայտչականության⁸: Նարեկացու երկերի այս առանձնահատկությամբ ոգեշնչված՝ դրան են անդրադարձել անգամ օտար հեղինակները: Մատենանի ռուս թարգմանիչ Վլադիմիր Միկուշևիչը Նարեկացուն նվիրված իր «Բուժիչ լույսը» հոդվածում գրել է. «Նարեկացու բանատողի վեհ համադաշնության համեմատությամբ թե՛ արևմտյան սոնետը և թե՛ արևելյան գազելը թվում են քմահաճ էսքիզներ»⁹: Բնագրային այս առանձնահատկությունն անհրաժեշտ էր պահպանել նաև թարգմանություններում, քանի որ Մ. Լոզինսկու ճիշտ դիտարկմամբ, բանաստեղծության հնչեղությունն ու բառերի ձայնն ամենից վառ է ազդում մեր հուզականության վրա: Հնչում են բառերը, իսկ բառերը մտքերի, կերպարների, հասկացությունների, զգացմունքների կրողն են: Դրանք ներթափանցվում են ձայնային լույսով և ծածուկ միավորվում իրենք իրենց մեջ՝ ստեղծելով մեզ համար բարդ հանգույցներ, մտքերի ու զգացմունքների զուգորդումներ¹⁰:

Մատենանում հանդիպում են հանգիստության երկու ձևերն էլ՝ *բաղաձայնայնոյթ* (alliteration, բաղաձայն հնչյունների կրկնություն) և *առձայնայնոյթ*

⁶ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան 1985, 406: Մատենանի բնագրի հատվածները մեջքերել ենք այս հրատարակությունից՝ նշելով համապատասխան էջը:

⁷ Տե՛ս Աբեղյան 1971, 336, Ղազինեան 1995, 235:

⁸ Տե՛ս Թամրազյան 2016, 269:

⁹ Микушевич, Целительный свет (Поэма Гр. Нарекаци «Книга скорбных песнопений»), Вестник Ереванского университета, 1981, № 3, 73.

¹⁰ Տե՛ս Лозинский, Искусство стихотворного перевода, 1955, № 7, 164.

(assonance, ձայնավոր հնչյունների կրկնություն): Բնագրի այս դրսևորումները դիտարկել ենք Մկրտիչ Խերանյանի և Վազգեն Գևորգյանի՝ *Մալտեանի* արևելահայերեն չափածո աշխարհաբար թարգմանություններում:

Բաղաձայնայնություն

Կրկնվող ձայնային տարրերը ոչ միայն երաժշտականություն ու դիթամ են ստեղծում, այլև «հաճախ հանդես եկող հնչյունն իր բնույթով համապատասխանում և օգնում է ավելի լավ պատկերացնել նկարագրվող առարկան»¹¹: *Մալտեանում* հանգիստության ձևերին հեղինակը գիտակցաբար է դիմել, քանի որ յուրաքանչյուր կրկնվող հնչյուն՝ բացի արտահայտչականությունից, իմաստային դեր է կատարել: Այս նկատի ունենալով՝ թարգմանիչ Խերանյանը Նարեկացուն համարել է ալիտերացիայի մեծագույն և անգերազանցելի վարպետ, ով առաջին անգամ և աննախընթաց կերպով հասկացավ դրա նշանակությունն ու լայնորեն օգտագործեց այն՝ նախաստեղծական խոսքը դարձնելով հույժ երաժշտական ու ներգործուն¹²:

Մալտեանն առավել հարուստ է բաղաձայնների կրկնությամբ («*Միամտություն՝ ի մանկութեան, անբծություն՝ յայլամտութեան*», *Մալտեան*, 372, «*Կրկին՝ կորասցի կարկամեալ կամաւ*», *Մալտեան*, 511), որոնք թարգմանություններում գրեթե նույն քանակով են պահպանվել: Բաղաձայնայնությամբ հագեցած է հատկապես ՂԲ գլուխը, որը, սակայն, Խերանյանի և Գևորգյանի թարգմանություններում ընդգրկված չէ («...այլ ընդ **ծագս** տիեզերաց եւ ընդ **ծիրս եզերաց**, ի **ծոցս** ջուրց բազմութեան **ծովուց**», *Մալտեան*, 616// «...ջնար ջահաւորական, անջրելի նամակ, **ջափազով** անխափանական **տէրունական տնարինականացդ**», *Մալտեան*, 617):

Մալտեանն առանձնանում է նաև բաղաձայնների ընտրությամբ, քանի որ բաղաձայնայնություն է ստեղծվում այնպիսի հնչյուններով, որոնց կրկնությունն այլ երկերում հազվադեպ է հանդիպում («*Ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան*, / *Յանձն իմ անձրեւեալ, կենաց ինձ զաւրէ*», *Մալտեան*, 572, «*Ճմարտութեան ճանապարհ, երկնաճեմ սանդուղք*», *Մալտեան*, 375, «*Համաշաւիդ տազնապաւ տապոյ տոչորման անբշկականի*», *Մալտեան*, 437): Այսպիսի հնչյուններն ավելի հաճախ բնության պատկերներ են ստեղծում՝ զուգորդված ձայնային, տեսողական, զգայական ընկալումներով:

¹¹ Զրբաշյան 1972, 330:

¹² Տե՛ս Գրիգոր Նարեկացի 1960, XXXIII:

Հանգիստությունը Գրիգոր Նարեկացու Մատեան ողբերգության...

Քանզի գոր արինակ տատանին տագնապալ տերեւ տնկոց եղելին ծանոց,

Շարժեալք ի հողմոց ուժգին բախելոց՝ հոսեալք ի խոնարի (*Մատեան*, 490):

Նշված տողերում պատկերվում է եղևնու տերևների շարժում, որոնց ուժգին թափահարումից առաջ է գալիս ծայն՝ արտահայտված տագնապի զգացողությամբ: Նմանաձայնությունը, զուգորդվելով պատկերին, շարժմանը, ծայնին և զգացողությանը, առաջ է բերում բնաձայնություն:

Խերանյանը կրկնվող հնչյունների հավասարաչափ պահպանմամբ վերստեղծել է բնագրային պատկերի տեսանելի և լսելի լինելը: Նմանաձայնության այսպիսի դրսևորումները, սակայն, միշտ չէ, որ արտահայտվել են Գևորգյանի թարգմանության մեջ, քանի որ նա *Մատեանի* բոլոր տողերը թարգմանել է յամբ-անապեստյան չափով¹³, և հաճախ ընտրված հոմանիշներն իրենց հնչյունական կազմով չեն համապատասխանել բնագրի բառերին:

Քանզի, ինչպես որ կտատանվեն
տագնապով տերևները եղևնու դալար
տունկերի

Ու շարժվելով ուժգին հողմերից՝
կթափվեն գետին¹⁴:

Եվ, ահա, բարդու/ նկուն, դողահար

Ու տագնապալի/ տերևների պես

Որոնք հողմերի/ բախումից վայ-

րագ

Պոկոտված՝ դողդոջ/ թափվում են
գետին¹⁵:

Ակնհայտ է, որ բանաստեղծական չափը պահելու նպատակով է Գևորգյանը «եղևնի»-ն փոխարինել «բարդիով», իսկ «տագնապին»-ը՝ «նկուն», «դողահար» բառերով:

Թարգմանիչները վերստեղծել են նաև *Մատեանի* ՁԸ գլխի **ա** և **վ** հնչյունների կրկնությունները: Գևորգյանը երկրորդ տողի բառերն արտահայտել է այնպիսի աշխարհաբար համարժեքներով, որոնք սկսել են **վ** հնչյունով՝ այդ կերպ առավել նպաստելով ծայնային ներդաշնակությանը:

Կապտեսցի՛ն կապանքն, վանեսցի՛ վիին

¹³ Այս չափի մասին տե՛ս **Զրբաշյան** 1976, 266:

¹⁴ **Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության** 1960, 266: Խերանյանի թարգմանությունից օրինակներն ընդգրկել ենք այս հրատարակությունից՝ նշելով համապատասխան էջը:

¹⁵ **Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության**. Տաղեր 1979, 372: Գևորգյանի թարգմանությունից օրինակներն ընդգրկել ենք այս հրատարակությունից՝ նշելով համապատասխան էջը:

Ապրեսյան Ա.

Վերասցի՛ն վնասքն, պարսեսցին պատրանքն

Ջրեսցի՛ն մեղքն, պատառեսցի՛ն պարտիքն (*Մատենան*, 376):

Կտրատվեն կապանքներն ու Կտրատվեն, քանդվեն, կապանք ու վիհը վանվի, շղթա,

Վնասները վերանան, ցնդեն Վիհը վերանա, վնասը վանվի, պատրանքներն ու մեղքերը ջրվեն, Պարսվեն, չքանան պատրանքները

Պարտաթղթերը պատռվեն նենգ Մեղքերը ջնջվեն, պարտքերը ջնջվեն (*Գևորգյան*, 203):

Թարգմանություններում որոշ հնչյունների նմանաձայնությունը չէր կարող արտահայտվել գրաբարի ու աշխարհաբարի քերականական ձևերի տարբերությունների հետևանքով.

Քարոզեսցէ զխորոցն, պատմեսցէ զմեղացն,

Մերկացուցէ զանտեսիցն, ցուցցէ զմերկապարանս թաքուցելոցն (*Մատենան*, 599):

Աշխարհաբարը, թեև հնարավորություն չի ընձեռում վերստեղծել **զ** և **ց** հնչյունների կրկնությունների այն ամբողջ ճոխությունը, որն ակնհայտ է բերված օրինակում, սակայն թարգմանիչները փորձել են ինչ-որ չափով արտահայտել այն.

Դուրս պիտի հանի խորքում Հրապարակի՛ ինչ-որ թաղված է եղածներն ու մեղքերը պատմի, եղել խորքերում,

Անտեսները պիտի մերկանա, Մեղքերս պատմի, թաքնվածները թաքցրածները ցուցահանի (*Խերանյան*, 377): Ցուցադրի բուն կերպարանքներով (*Գևորգյան*, 528):

Բաղաձայն հնչյունների հետևողական կրկնություններ են հանդիպում նաև *Մատենանի* թեմավոր խոսքի կամ ասույթի արժեք ունեցող արտահայտություններում, քանի որ, ինչպես հայտնի է «հանգիտությունն ավելի հին ծագում ունի, քան հանգը, և այն հայտնի էր դեռևս ժողովրդական բառախաղերից, առածներից, ասույթներից, հանելուկներից և այլն»¹⁶: Դրանք հորինվել են հանգով կամ հանգիտությամբ: Հանգիտությունը նպաստել է հիշողությանը. թե՛ նշանակությամբ և թե՛ արտաքին հնչյունական ձևով իրար հետ կապված բառերի վերարտադրությունը մեր հիշողության մեջ ավելի

¹⁶ Ղազիսեան 1985, 235:

Հանգիստությունը Գրիգոր Նարեկացու Մատեան ողբերգութեան...

հեշտությամբ է կատարվում¹⁷: Այսպիսով, բաղաձայն հնչյունների հետևողական կրկնություններ են հանդիպում նաև *Մատեանի* թեմայի խոսքին կամ ասույթին համարժեք արտահայտություններում:

Մտեմ ի բոյնն աղանի, եւ անդուստ ագռաւ ելանեմ,

Գամ սակաւ մի սպիտակ, եւ սրանամ դառնամ բնաւիմ սեւացեալ (*Մատեան*, 529):

Խերանյանի թարգմանության մեջ այսպիսի հատվածների նմանաձայնությունը հիմնականում պահպանվել է: Գևորգյանի համար, թերևս, դժվար էր բոլոր հատվածներում հավատարիմ մնալ և՛ իմաստին, և՛ հակիրճությանը, և՛ հնչյունական համադրությանը, ու նրա թարգմանության մեջ դրանք սակավադեպ են արտահայտվել:

Մտնում եմ բոյնն իբրև աղավնի
ու դուրս գալիս այնտեղից իբրև ագռավ,

Մտնում եմ բոյնը որպես աղավնի,
Բայց դուրս եմ ելնում այնտեղից ագռավ:

Գալիս եմ սակավ ինչ սպիտակ և
գնում եմ բոլորովին սև (Խերանյան, 307):

Գալիս եմ ճերմակ, վերադառնում
եմ լրիվ սևացած (Գևորգյան, 433):

Առձայնայնություն

Նկատելի է, որ եթե բաղաձայնների կուտակումը նպաստում է պատկերների ստեղծմանը, ապա ձայնավորների կրկնությունը հատուկ երանգ է հաղորդում երկին: Գրեթե նույն կերպ Մանուկ Աբեղյանը կարծում էր, որ «եթե մի տխուր ու տրտում վիճակ է նկարագրվում, կարելի չէ բաց ու պայծառ *ա* ձայնավորի հանգիստություն անել և, ընդհակառակը, պայծառ և ուրախ տրամադրությունը կարելի չէ արտահայտել *ու, ի, ը* խուլ ձայնավորների հանգիստությամբ»¹⁸: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ստեղծագործության, այդ թվում և *Մատեանի* համար, ձայնավորների ընտրությունը պայմանավորվել է բովանդակությամբ և հեղինակի ոճով («Քեզ *ալիսնությունը ձայնից եւ բուրմունք խնկոց ի յերկրի/ եւ անուշից իւղոց մալուցումն յամենայնի*», *Մատեան*, 346, «Հրեշտակ ի մարդկանէ, մարմնապրեսիլ քերորէ, երկնաւոր *արքայուհի*», *Մատեան*, 571):

Հեղինակը որոշ հատվածներում առձայնայնություն ու բաղաձայնայնություն միասին է գործածել՝ միևնույն կամ զուգահեռ տողերում՝ իրավիճակները, հույ-

¹⁷ Տե՛ս Աբեղյան 1971, 346–347:

¹⁸ Աբեղյան 1971, 338:

Ապրեսյան Ա.

զերն ու ապրումները նկարագրելու, դրանք ավելի տեսանելի ու ազդեցիկ դարձնելու համար: Հնչյունական այսպիսի կրկնությունները թարգմանություններում նույն քանակով են պահպանվել (*«Ի բարձրեալն Հաւրէ զաւրացեալ եւ հովանացեալ, / Հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ եւ մաքրագործեալ»*, Մատեան, 570, *«Բարձրյալ Հորից զորացած և հովանավորված, / Հանգստությամբ Հոգու պատրաստված և մաքրագործված»*, Խերանյան, 343, *«Հովանավորված, զորացած՝ բարձրյալ արարչի ձեռքով, / Հանգստությամբ հոգու՝ շնորհազարդված ու մաքրագործված»*, Գևորգյան, 482): Եվ միայն որոշ հատվածներում դրանք փոխարինվել են այլ հնչյունական համադրությամբ: Օրինակ՝ ՀԱ գլխում *մ* բաղաձայնը կրկնվել է *ա, ե, ո* ձայնավորների հետ.

Շրթամբք ճշմարտեմ, եւ ստեմ երիկամամբք,
Աջովս մատակարարեմ, եւ ահեակ կողմամբս աւերեմ,
Ընդ երկրագործութեան ցորենոյն՝ որոմն սերմանեմ
(Մատեան, 529):

Բերված օրինակի հնչյունական համադրությունը թարգմանիչները փոխարինել են *ս, ց* և *ո* հնչյունների նմանաձայնությամբ.

Շուրթերովս շիտակ եմ խոսում և սրտովս ստում, Աջ ձեռքովս տնտեսում եմ և ձա- խովս՝ ցրում:	Շրթունքներովս ճշմարտում եմ, բայց սրտովս՝ ստում: Աջով անտեսում, ցրում եմ ձա- խով.
Ցորեն ցանելու հետ սերմանում եմ և՛ որոմ (Խերանյան, 308):	Ցորեն ցանելիս, որոմ եմ խառ- նում (Գևորգյան, 433):

Հանգիստության բարդ կիրառություններ

Ուշագրավ է այն, որ բացի վերոնշյալ ձևերից՝ Նարեկացին ստեղծել է հանգիստության ավելի բարդ կիրառություններ՝ **տողասկզբի ու տողավերջի բառի և տառի նմանաձայնություն, հարևան բառերի նույն կամ նման հնչյունների հերթագայություն և շղթայահար հանգիստություն**¹⁹: միևնույն տողի կամ կից տողերի մեջ նույն կամ նման հնչյունների կրկնություն¹⁹:

Առաջին երկու դեպքերում (*«Մեղա՛յ գերունակ գոգոյդ գրգանաց, ստուգապէս մեղա՛յ, / Մեղա՛յ աննուազ լուսոյդ վայելման, նենգողս մեղա՛յ»*, Մատեան, 348–349, *«Եւ ի պատրասխանութեանն պահու պապանձեալ կարկիմ»*,

¹⁹ Տե՛ս Ղազինեան 1985, 236:

Հանգիստությունը Գրիգոր Նարեկացու Մատեան ողբերգության...

Մալբան, 530, «Առ մալբաղ մանկուն բեթելացիս քրմորդիս», Մալբան, 519) թարգմանիչները հավատարիմ են մնացել բնագրին՝ նմանաձայնական առանձնահատկությունները նույնությամբ արտահայտելով: Մինչդեռ թարգմանություններում այլ կերպ է արտահայտվել շղթայահար հանգիստությունը: Այսպես, Ղ գլխում այդպիսի հանգիստություն է ստեղծվել **վ, ո, ի, ս, պ, ն, զ** հնչյունների կրկնությամբ.

**Վերասցի՛ն վարմին վերարկուք,
Տոչորեսցի՛ն որոմանցն բոյսք,
Նզովեսցի՛ն բռնաւորին չարաբանութիւնք,
Կտրեսցի՛ լար խաբէութեան ի մահ որսողին,
Պարսեսցի՛ն պատրողին բանսարկութիւնք,
Պակասեսցի՛ն զէնք զրպարտողին,
Անկցի՛ն սուսերք մահաբերին,**

Սուզեսցի՛ն սադրողին պատրաստութիւնք (Մալբան, 604–605):

Խերանյանի թարգմանության մեջ տառակրկնությունը հաճախ վերջա-կրկնության արժեք է ձեռք բերել, այնինչ Գևորգյանը մասամբ է պահպանել այն, որի հետևանքով թուլացել է տվյալ հատվածի նմանաձայնական հզորությունը.

**Վերանան ցանցի ծածկոյթները,
որոմների ծիլերը վառվեն,**

**Եվ թո՛ղ նզովվեն չարաբանութ-
յունները բռնավորի,**

**Թող կտրվի լարը խաբէության ի
մահ որսացողի,**

**Թող կորչեն բանսարկությունները
պատրողի,**

**Թող պակասեն զենքերը զրպար-
տչի,**

**Թող ընկնեն սրերը մահաբերների
ձեռքից,**

Թող սուզվեն սարքերը սադրողի
(Խերանյան, 382):

**Վերանա վարմի ամեն ծածկ ու
քող,**

**Որոմնաբոյսերն այրվեն տապա-
հար,**

**Բռնացողների դավերն ստանան
անեծք ու նզովք,**

**Ծվատվի ցանցը խաբէայական
ի մահ որսողի,**

**Պարսվի պատրողի ամեն բարու-
րանք.**

**Ջրպարտիչների զենքերը հատ-
նեն,**

**Ընկնեն սրերը մահ տարածողի,
Խորտակված թաղվի սադրողի
ամեն մեքենայություն** (Գևորգյան, 535):

Շղթայահար հանգիստություն է ստեղծվել նաև Մալբանի Զ գլխում՝ **կ, ծ, զ, գ, ո** հնչյունների կրկնությունների միջոցով.

Ապրեսյան Ա.

Կործանիչն եւ հնազանդեալք իւր,
Բռնաւորն եւ յելուզակք իւր,
Գոռոզն եւ սպառազէնք իւր,
Աւազակապետն եւ գումարտակք իւր,
Գազանն եւ կորիւնք իւր,
Խաժանողն եւ ծակոտուածքն իւր,
Ապականագործն եւ նմանիք իւր (*Մատթան*, 269):

Այս և որոշ նմանատիպ հատվածների հնչյունական կրկնությունները Խերանյանը հիմնականում պահել է, երբեմն էլ նույնիսկ առավել հնչեղ արտահայտել: Գևորգյանը կամ պահել է դրանք, կամ դարձյալ ընտրել է բանաստեղծական չափին համապատասխան այնպիսի բառեր, որոնք պակաս ծայնեղ են արտահայտվել:

Կործանարարն իր հպատակներով.
Բռնավորն իր հելուզակներով.
Գոռոզն իր սպառազեններով.
Ավազակապետն իր գումարտակներով.
Գազանն իր կորյուններով.
Խաժանողն իր ծակոտվածքներով,
Եվ ապականություն գործողն իր նմաններով (Խերանյան, 26):

Կործանիչը իր հպատակներով,
Բռնակալը իր ելուզակներով,
Ամբարտավանն իր հրոսակներով,
Ավազակապետն իր ռհմակներով,
Ամեհի գազանն իր կորյուններով,
Խաժոտողը իր խայթ ու խոցերով
Եվ պղծագործն իր նմանների հետ
(Գևորգյան, 42):

Եզրակացություն

Շատ թարգմանիչներ կարծում են, որ այն ստեղծագործությունները, որոնցում ծայնային կրկնությունները կարևոր դեր են կատարում, անհնար է ճշգրիտ թարգմանել²⁰: *Մատթանի* թարգմանությունը, որ նույնպես երբեմն անհնարին է թվում, կարող է հանձն առնել այնպիսի թարգմանիչ, որը զգայուն է բառային հնչեղության նկատմամբ: Խերանյանն ու Գևորգյանը օրինակների մեծ մասում պահպանել են հանգիստությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դիմում ու բանաստեղծական չափը պահելու նպատակով դրանք չեն արտահայտվել: Թարգմանիչներն աշխատել են չթուլացնել *Մատթանի* հնչողությունը, այլ վերստեղծել այն մի ներքին զգացողությամբ, ինչը հաճախ նրանց հաջողվել է:

²⁰ Տե՛ս *Чуковский* 1968, 180:

Հանգիստությունը Գրիգոր Նարեկացու Մատենան ողբերգութեան...

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1971, Երկեր, հ. Ե, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 511 էջ:

Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան 1985, աշխատասիրությամբ՝ Խաչատրյան Պ. և Ղազինյան Ա., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1123 էջ:

Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգության 1960, գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյան, Երևան, Հայպետհրատ, XXXIV+409 էջ:

Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգության 1979. Տաղեր, թարգմանություն՝ Վազգեն Գևորգյանի, Երևան, «Սովետական գրող», 654 էջ:

Թամրազյան Հ. Հ. 2016, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Բ, Երևան, «Նաիրի», 454 էջ:

Ղազինեան Ա. 1995, Գրիգոր Նարեկացի, բանաստեղծական արուեստը, Անթիլիաս, 264 էջ:

Ջրբաշյան Էդ. 1972, Գրականության տեսություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 510 էջ:

Ջրբաշյան Էդ. 1976, Պոետիկայի հարցեր, Երևան, «Հայաստան», 461 էջ:

Սուրենյան Կ. 1979, Արևորդիներ, Երևան, «Սովետական գրող», 332 էջ:

Лозинский М. 1955, Искусство стихотворного перевода, Дружба народов, изд. СП СССР, № 7, с. 158–166.

Микушевич В. 1981, Целительный свет (Поэма Гр. Нарекаци «Книга скорбных песнопений»), Вестник Ереванского университета, Ереван, изд. Ереванского Университета, № 3, с. 61–73.

Чуковский К. 1968, Высокое искусство, Москва, изд. «Советский писатель», 384 с.

КОНСОНАНС В ПЕРЕВОДАХ НА СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК «КНИГИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГРИГОРА НАРЕКАЦИ

АПРЕСЯН А.

Резюме

Ключевые слова: Григор Нарекаци, «Книга скорбных песнопений», консонанс, аллитерация, ассонанс, Мкртыч Херанян, Вазген Геворкян.

В поэтическом звучании «Книги скорбных песнопений» Григора Нарекаци особую роль играет консонанс – последовательное повторение одних и тех же или схожих звуков. Автор применял как обе формы консонанса – аллитерацию (повторение согласных звуков) и ассонанс (повторение глас-

ных звуков), так и их новых и более сложных форм – сцепленного консонанса, чередования одинаковых или схожих звуков соседних слов.

Поскольку в поэме Нарекаци консонанс является доминантой, то это должно было найти отражение и в переводах. Мы изучили явление консонанса в стихотворных переводах «Книги скорбных песнопений» на современный восточноармянский язык, выполненных Мкртычем Хераняном и Вазгеном Геворкяном.

В переводе Мкртыча Хераняна формы консонанса в основном выражены тождественно, за исключением тех частей, где повторение букв получило значение повторения окончаний, или повторяющиеся элементы были заменены близкими или похожими звуками. Однако Вазген Геворкян иногда отходил от формы оригинала, поскольку она не давала возможности придать переводу необходимую поэтичность, а иногда и сохранить стихотворный размер.

CONSONANCE IN THE MODERN ARMENIAN TRANSLATIONS OF THE “BOOK OF LAMENTATION” BY GRIGOR NAREKATSI

APRESYAN A.

Summary

Key words: Grigor Narekatsi, *Book of Lamentation*, consonance, alliteration, assonance, Mkrtych Kheranyan, Vazgen Gevorkyan.

The sonority of the *Book of Lamentation* by Grigor Narekatsi was promoted by the consistent repetition of the same or similar sounds, i.e. consonance. In the *Book of Lamentation* the author used both forms of consonance: alliteration (repetition of consonants) and assonance (repetition of vowels), as well as their new and more complex forms, as concatenated consonance, alternation of the same or similar sounds of neighboring words. Since sound repetitions played an important role in Narekatsi's work, it was necessary to represent them in the translations either.

Հանգիստությունը Գրիգոր Նարեկացու Մատենան ողբերգության...

The present article studies the phenomena of consonance in the poetic translations of the *Book of Lamentation* into modern Eastern Armenian by Mkrtich Kheranyan and Vazgen Gevorkyan.

In the translation by Mkrtich Kheranyan, the forms of consonance are basically identical, except for those parts where the repetition of letters coincides with the repetition of the endings, or the repeating elements are replaced with close or similar sounds. However, Vazgen Gevorkyan sometimes renounces the original form, since it does not allow to convey poetic sounding to the translation and keep the poetic metre. Hence, constraints of choosing words with different sound combinations.